«Այբ» ավագ դպրոց

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Քննաշրջան՝ **2024 թ., ապրիլ**
Տևողություն՝ **1 ժամ 15 րոպե**
Հավելյալ նյութ՝ *Պատասխանների գրքույկ*

ՈՒՇԱԴԻՐ ԿԱՐԴԱԼ ԱՅՍ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ

Անհրաժեշտ է հետևել *Պատասխանների գրքույկի* կազմին գրված ցուցումներին:
Գրել մուգ կապույտ կամ սև գրիչով:
Պետք է պատասխանել **բոլոր** հարցերին:
Քննության վերջում բոլոր թղթերը հավաքել և հանձնել մեկ տրցակով:

Յուրաքանչյուր հարցի հնարավոր առավելագույն միավորը նշված է հարցի վերջում՝ աջ կողմում:
Հարցերի միավորների ընդհանուր քանակը **32** է:

Այս փաստաթուղթը բաղկացած է **4** տպագիր էջից:

Առաջադրանք 1 Սիրելի՛ դիմորդ, ստորև ներկայացված է մի հատված Փավստոս Բուզանդի «Հայոց պատմություն» աշխատությունից: Ընթերցի՛ր այն և պատասխանի՛ր հարցերին:

Ապա Շապուհ թագավորը հրաման է տալիս իր սենյակի հատակի կեսի վրա շաղ տալ Հայաստանից բերած հողը և վրան ջուր ցանել, իսկ մյուս կեսը թողնել բնիկ երկրի նույն հողը: Եվ հայոց Արշակ թագավորին բերել տվեց իր առաջ և մյուս մարդկանց հրամայեց հեռանալ և, նրա ձեռքից բռնած, ճեմելով շրջում էր: Սենյակում երթևեկելիս, երբ ճեմում էին պարսկական հողի վրա, ասաց նրան. «Արշակ թագավոր Հայոց, դու ինչո՞ւ ինձ թշնամի եղար, ես քեզ որդու նման սիրեցի, կամեցա աղջիկս քեզ կնության տալ և քեզ ինձ որդի դարձնել, իսկ դու իմ դեմ խստացար, ինքնակամ, հակառակ իմ կամքի, ինձ թշնամի դարձար և ահա ամբողջ երեսուն տարի ինձ հետ պատերազմեցիր»:

Արշակ թագավորը ասում է. «Մեղանչեցի և հանցավոր եմ քո առաջ, որովհետև ես եկա, քո թշնամիներին հաղթեցի ու կոտորեցի և հույս ունեի քեզանից կյանքի պարգև ստանալ, բայց իմ թշնամիները ինձ մոլորեցրին, քեզանից վախեցրին և փախչել տվին: Եվ երդումս, որով քեզ երդվեցի, ինձ քո առջև բերեց, ես հիմա քո առաջ և քո ձեռքում եմ, ինչպես ուզում ես վարվիր ինձ հետ, եթե կամենում ես, սպանիր, որովհետև ես շատ հանցավոր եմ քո առաջ, մահապարտ եմ»:

Շապուհ թագավորը, նրա ձեռքից բռնած, շրջում է ճեմելով, անմեղ ձևանալով բերում է հայկական հող շաղ տված հատակի վրա: Իսկ երբ Արշակը այն տեղն է հասնում, հայկական հողի վրա ոտք է դնում՝ սաստիկ ըմբոստանալով, հպարտանալով լեզուն փոխում է, սկսում է խոսել և ասել. «Հեռո՛ւ ինձանից, չարագոփրծ ծառա, որ տերերիդ վրա տեր ես դարձել, և ես չեմ ների քեզ և քո որդոց իմ նախնիների վրեժը և Արտավան թագավորի մահը: Որովհետև այժմ դուք՝ ծառաներդ, մեր՝ ձեր տերերի բարձն եք հափշտակել, բայց ես չեմ թույլ տա այդ, մինչև դարձյալ մենք մեր տեղը չգրավենք»:

Շապուհը դարձյալ, նրա ձեռքից բռնած, տանում է պարսկական հողի վրա, այն ժամանակ Արշակը զղջում է ասածների համար, խոնարհվում է, նրա ոտքերն է ընկնում, սաստիկ ափսոսում, զղջում է ասածների համար: Իսկ երբ ձեռքից բռնած տանում է հայկական հողի վրա, առաջինից ավելի խիստ է խոսում: Նորից հեռացնում է այդ հողի վրայից, սկսում է խոսքերով ապաշխարել:

Հարց 1 Ինչպե՞ս է կոչվում 5-րդ դարը (1 միավոր):

5-րդ դարը կոչվում է Ոսկեդար:

Հարց 2 Ո՞վ է Փավստոս Բուզանդին նախորդող պատմիչը և ինչի՞ մասին է նա գրել (2 միավոր):

Բուզանդը ժամանակագրորեն շարունակել է Ագաթանգեղոսին, ով իրենից առաջ գրել է Հայաստանում քրիստոնեության մուտքի, Տրդատ Մեծ արքայի և Գրիգոր Լուսավորչի գործունեության մասին մինչև նրանց մահը:

Հարց 3 Պատմական ի՞նչ ժամանակաշրջան է ընդգրկում Փավստոս Բուզանդի «Հայոց պատմություն» երկը և ինչպե՞ս են կոչվում գրքի գլուխները (2 միավոր)։

Փավստոս Բուզանդի գիրքն ընդգրկում է 319-384 թվականների 65 տարվա պատմությունը՝ Տրդատ Մեծի որդի Խոսրով Կոտակից մինչև Հայաստանի առաջին բաժանմանը հաջորդող տարիները։ Նրա գրքի գլուխները խորագրված են «Բյուզանդարան պատմություններ»։

1 միավոր - երկի պատմական ժամանակաշրջանը

1 միավոր - աշխատության գլուխների խորագիրը

Հարց 4 Ո՞րն է հայրենի երկրի հողի ու ջրի խորհուրդը։ Ինչո՞ւ է Արշակ թագավորը իրեն ավելի զորեղ զգում հայրենի հողի ու ջրի վրա (2 միավոր)։

Բուզանդի համար կարևորագույն արժեքներ են՝ հայրենիքը, պետականությունը, հավատն ու եկեղեցին, որոնց դեմ գնացողը կամ անտեսողը պատժվում է։ Պատմական անձերը, լինի թագավոր, զինվոր, թե հոգևորական, առաջին հերթին պետք է հավատարիմ լինեն իրենց առաքելությանը, նվիրված լինեն հայրենիքին ու պատրաստ լինեն զոհաբերության։ «Արշակ և Շապուհ» ավանդազրույցի մեջ տեսնում ենք, որ հայրենի հողը նույնիսկ Հայաստանից հեռու ուժ է տալիս պարսկական գերության մեջ հայտնված Արշակ թագավորին։

Հարց 5 Մեկնաբանի՛ր Արշակի եւ Շապուհի հարաբերությունները պատմական տեսանկյունից։ Ինչպիսի՞ն են եղել Հայաստան-Պարսկաստան հարաբերությունները տվյալ ժամանակաշրջանում։ Շարադրի՛ր կարծիքդ հիմնավորումներով (5 միավոր)։

Պատմական հերոսները Բուզանդի պատմության մեջ լիարյուն մարդիկ են, կամ գրական կերպարներ իրենց քաջությամբ ու վախերով, հերոսականությամբ ու նենգությամբ, սիրով, խանդով, դավաճանությամբ։ Պարսից Շապուհ արքան ցանկանում էր հայոց Արշակ թագավորի հետ խաղաղություն և մեծ բարեկամություն հաստատել և այդ նպատակով իր մոտ է կանչում Արշակ թագավորին։ Արշակ թագավորը չի ցանկանում ընդունել հրավերը, սակայն բախվում է հայոց զորքի դժկամությանը։ Շապուհը հայոց արքայի մտադրությունները ստուգելու համար դիմում է հողին ջրի խորհրդին։ Արշակ արքան ըմբոստանում է, և այդ ժամանակ պարսից Շապուհ թագավորը հրամայում է երկաթե շղթաներով կապկպել Արշակին և տանել Անհուշ բերդը։ «Արշակ և Շապուհ» ավանդազրույցը մի դրվագ է հայերի՝ Պարսկաստանի բռնակալական կարգին ու իշխանությանը չենթարկվելու, դրա դեմ ընդվզելու պատմությունից։

Հարց 6 Հատվածի համար գրի՛ր ամփոփում. քո բառերով շարադրի՛ր, թե ինչ է ասվում այդ հատվածում։ Ամփոփման մեջ ներառի՛ր նաև քո մեկնաբանությունը 5-6 նախադասությամբ (5 միավոր)։

Ազատ շարադրանք

Առաջադրանք 2 Սիրելի՛ դիմորդ, ընթերցի՛ր Միսաք Մեծարենցի «Աքասիաներու շուքին տակ» բանաստեղծությունը և պատասխանի՛ր հարցերին։

Ծաղիկներեն հուշիկ թերթեր կը թափե
Բուրումներով օծուն հովիկն իրիկվան,
Հոգիներուն կ'իջնե երազ մը բուրյան,
Ի՞նչ հեշտին է մրթնշաղն այս սատափե։

Աքասիաներ, գինով լույսե ու տապե,
Օրորվելով մաքուր շունչ մը կը հևան.
Մինչ կը ձյունե ծաղիկն իրենց հոտևան՝
Զոր խոլաբար հովը գրկել կը շտապե։

Ու լույսն անոնց, անխոս հուրի՛ դյութական,
Հրմայազեղ ու վարսքերով արծաթե,
Շատըրվանին կ'իջնե գուռին մեջ կաթե։

Ջուրը ցայտքեն ծաղիկ ծաղիկ կը կաթե.
Վրճիտ, ինչպես լույսե արցունքը մանկան,
Նրվազն անոր կը հեծեծե հեշտական։

Ծաղիկներեն հովը թերթեր կը թափե…

Հարց 1 Նշի՛ր Միսաք Մեծարենցի ծննդավայրը (1 միավոր)։

Միսաք Մեծարենցը ծնվել է Խարբերդի նահանգի Բինկյան գյուղում։

Հարց 2 Թվարկի՛ր Միսաք Մեծարենցի բանաստեղծական ժողովածուների վերնագրերը (2 միավոր)։

Միսաք Մեծարենցի երկու ժողովածուներն են՝ «Ծիածան» և «Նոր տաղեր»։

Հարց 3 Բանաստեղծությունից դու՛րս գրիր երեք տարբեր պատկերավորման միջոցի օրինակ՝ դիմացը նշելով տեսակը (3 միավոր)։

Սատափե մթնշաղ – մակդիր
Հոգիներուն կ'իջնե երազ մը բուրյան - փոխաբերություն
Վրճիտ, ինչպես լուսե արցունքը մանկան - համեմատություն

Հարց 4 Մեկնաբանի՛ր, թե ինչպես են կառուցվում փոխաբերական պատկերները։ Ներկայացրո՛ւ բանաստեղծական տների կապակցման եղանակը (4 միավոր)։

Բանաստեղծության յուրաքանչյուր տան մեջ բնության պատկերները շարժման ու զարգացման մեջ, որոնք արտացոլում եմ մարդկային հույզերն ու ապրումները։ Բնության

տեսարաններն իրար են հաջորդում փոխաբերական պատկերների փոփոխությամբ, որին նպաստում են բանաստեղծական տան՝ առաջին և չորրորդ, ինչպես նաև երկրորդ և երրորդ տողերի հանգավորումները։

Այսպես՝ առաջին տան մեջ «կը թափե» և «սատափե» , «իրիկվան» և «բուրյան» բառերի հանգավորմամբ մի կողմից գծագրվում է բնապատկերների շարժուն ընթացքը իրական և կենդանի գուներանգներով։ Մյուս կողմից՝ փոխաբերություն-պատկերները կենդանացնում են բանաստեղծի հոգեկան աշխարհն ու ապրումները։

Երկրորդ և երրրոդ տան հանգավորումների միջոցով շնչավորվում է ողջ բնությունը։ Փոխաբերական պատկերներում աքասիաները կերպավորվում է որպես ձյունի փաթիլներ և հուրիներ, իսկ հովը՝ նրանց սիրահարը։

Սիրային տրամադրության ստեղծմանն ու ծավալմանը նպաստում են առաջին և վերջին հատվածում կրկնվող « Ծաղիկներեն հուշիկ թերթեր կը թափե/Ծաղիկներեն հովը թերթեր կը թափե…» տողերը։

Հարց 5 Բացատրի՛ր, թե ինչպես են բնության երևույթները անձնավորվում «Աքասիաներու շուքին տակ» բանաստեղծության մեջ։ Ինչպիսի՞ պատկերներով են ներկայացվում աքասիաները։ Ի՞նչ գործառույթներ ունեն բնապատկերները (5 միավոր)։

Մեծարենցի ստեղծագործության մեջ բնության պատկերումը մի կողմից բնապաշտական երանգ ունի, այսինքն՝ ընթերցողին փոխանցվում է բնության հանդեպ ունեցած հիացումը, ամեն մանրուքը նկատելու ու գնահատելու մեծարենցյան նուրբ զգացումը, մյուս կողմից՝ այն խիստ խորհրդանշական է. բնապատկերները մարդկային հույզեր ու զգացումներ են թաքցնում իրենց խորքում։ «Աքասիաներու շուքին տակ» բանաստեղծությունը զով երեկոյի մի գեղեցիկ պատկեր է, որտեղ հովն ու աքասիաները շնչավորվում են, ձեռք բերում այսպես ասած սեռականություն։ Եթե աքասիան կերպավորվում է որպես հուրի՝ կանացի նրբագեղությամբ, ապա հովը կարծես նրան գրկել ցանկացող սիրահար է։